ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀԿԱԾ-ԷՊԳ/ԱԳԳԾ-22/1

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

«15» 03 2022թ.

ք. Երևան

ՀՀ արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Աշոտ Ավագյանի՝ մի կողմից, և «Էքսպերտ Պրոֆ Գրուպ փորձաքննությունների և գնահատման կենտրոն» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն Ա. Նազարյանի՝ մյուս կողմից (միասին անվանվելով Կողմեր), համաձայն Կողմերի միջև 02.03.2022թ. կազմված արձանագրության՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պարբերաբար հանձնարարում է կատարել անշարժ գույքի, իսկ անրաժեշտության դեպքում նաև շարժական գույքի (այսուհետ՝ Օբյեկտ) գնահատում և դրա արդյունքների հիման վրա Պատվիրատուին տրամադրել գրավոր հաշվետվություն (եզրակացություն): Պայմանագրով պատվիրված բոլոր գնահատումները կատարվում են Պատվիրատուի և կատարողի միջև համաձայնեցված գնացուցակի համաձայն (այսուհետ՝ Հավելված № 1), որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝.**

2.1.1 Կատարողից պահանջել ծառայությունը մատուցել Օբյեկտի և անհրաժեշտ նյութերի տրամադրման հաջորդ օրվանից սկսած՝ տասն օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված ժամկետում:

2.1.2. Կատարողից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները:

2.2. **Պատվիրատուն պարտավոր է՝.**

2.2.1. Կատարողի միջնորդության դեպքում տրամադրել գնահատման կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ:

2.2.2. Վճարել ծառայությունների մատուցման արժեքը՝ համաձայն ներկայացված հաշիվ-անդորրագրի:

2.3. **Կատարողն իրավունք ունի՝.**

2.3.1. Հանձնարարությունը ստանալուց հետո Պատվիրատուից պահանջել տրամադրելու գնահատման համար անհրաժեշտ տեղեկություններ և ապահովել գնահատվող գույքի զննությունը:

2.3.2. Պահանջել կատարված ծախսերի փոխհատուցում:

2.4. **Կատարողը պարտավոր է՝.**

2.4.1 Չտարածել Ծառայությունների մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական, առևտրային, բանկային և/կամ այլ գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը:

2.4.2. Գնահատման կատարումն իրականացնել անձամբ և միայն Պատվիրատուի հանձնարարությամբ ու օրենքով սահմանված կարգով, Պայմանագրի Հավելված 1-ով հաստատված

սակագներով, որոնք կարող են փոփոխվել Կողմերի լրացուցիչ գրավոր համաձայնագրով: Գնացուցակը և համաձայնագրերը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:
2.4.3. Գնահատման նպատակով ապահովել Օբյեկտի զննումն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագետի մասնակցությունը՝ ոչ ուշ, քան համապատասխան Օբյեկտի գնահատման համար նշանակված փորձաքննության որոշումն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում:
2.4.4. Գնահատում կատարել և եզրակացությունը տրամադրել Պատվիրատուին գնահատվող Օբյեկտի զննման և անհրաժեշտ նյութերի տրամադրման հաջորդ օրվանից հաշված՝ տասն օրվա ընթացքում սակայն ոչ ուշ քան «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված ժամկետում:
2.4.5 Պատվիրատուին ժամանակին տրամադրել լիարժեք, ամբողջական, հավաստի և մատչելի տեղեկատվություն Ծառայությունների վերաբերյալ:
2.4.6 Ծառայությունները մատուցելիս կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ, մեթոդներ և միջոցներ:
2.4.7 Անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքում նկատած խնդիրների և ծագած խոչընդոտների մասին:

3. Կատարման ժամկետները

3.1. Գնահատումը իրականացում է և եզրակացությունը տրամադրվում է տասն օրվա ընթացքում սակայն ոչ ուշ քան «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված ժամկետում:
3.2. Գնահատման կատարման ժամկետը սկսվում է օբյեկտը Կատարողի կողմից զննություն կատարելուն հաջորդող աշխատանքային օրվանից:
3.3 Գնահատման կատարումն ավարտելուն պես Կատարողը հեռախոսագրով հայտնում է Պատվիրատուին գնահատման կատարումն ավարտված լինելու փաստը:
3.4. Գնահատման համար անհրաժեշտ տեղեկություն տրամադրելու Կատարողի գրավոր պահանջի օրվանից մինչև Պատվիրատուի կողմից դրանց տրամադրելու օրն ընկած ժամանակամիջոցը գնահատման կատարման ժամկետի մեջ չի հաշվարկվում:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրով Ընկերության կողմից մատուցման ենթակա ծառայությունների համար սակագները սահմանված են Հավելված 1-ով:

4.2. Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.3. Գնահատման արժեքի չափի վերաբերյալ Կատարողը Պատվիրատուին հայտնում է հաշիվ-ապրանքագիր լրացնելու միջոցով, որը Պատվիրատուին է ուղարկվում եզրակացության հետ միասին:

4.4. Յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար Պատվիրատուն Կատարողին վճարում է մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 10-ը

4.5. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Պայմանագրի Հավելված № 2-ով սահմանված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

5. Պատվիրատուի հանձնարարության և Կատարողի եզրակացության ընդունման-հանձնման կարգը

5.1. Պատվիրատուն հանձնարարությունը Կատարողին է ուղարկում համապատասխան գրությամբ(որոշմամբ):
5.2. Կատարողը եզրակացությունը Պատվիրատուին է ուղարկում համապատասխան գրությամբ՝ հնարավորության դեպքում՝ նաև էլեկտրոնային եղանակով:

6. Պայմանագրի ուժի մեջ մտնելը և դադարելը

6.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մեկ տարի ժամկետով:
6.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին առնվազն քառասունհինգ օր առաջ տեղյակ պահելով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

7.1. Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել Կողմերի համաձայնությամբ:
8.2. Պայմանագրով չնախատեսված դեպքերում իրենց պարտավորությունները չկատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
8.3. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
8.4. Կողմերի միջև Պայմանագրի պայմանների կատարման ընթացքում ծագած վեճերն առաջնահերթության կարգով լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:
8.5. Բոլոր այն պայմանների դեպքում, որոնք նշված չեն Պայմանագրում, Կողմերը ղեկավարվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթներով:
8.6. թե Պայմանագրի կետերից որևէ մեկը ինչ-որ պատճառով ճանաչվում է ուժը կորցրած կամ անլուծելի, դա չի ազդում մյուս կետերի վրա, և դրանք չեն կորցնում իրենց իրավաբանական ուժը:

9. Կողմերի վավերապայմանները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	«Էքսպերտ Պրոֆ Գրուպ փորձաքննությունների և գնահատման կենտրոն» ՍՊԸ
0078, ք. Երևան, Հալաբյան 41ա	Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Աղբյուր Սերոբ 3Ա, 29 տարածք
ՀՎՀՀ 01223338	Գործունեության հասցե՝ ք. Երևան. Ամիրյան 22/24 տարածք
Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00198361
Հ/Հ 900011288025	Հ/Հ 2140006190530100
	«Բիբլոս Բանկ» ՓԲԸ
_____Ա. Ավագյան	Տնօրեն
	_____Ա. Նազարյան

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

« » 2022թ. կնքված

№ ՀԿԱԾ-ԷՊԳ/ԱԳԳԾ-22/1 պայմանագրի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

N/N	Հետազոտվող օբյեկտների գնահատում	Հետազոտվող օբյեկտի քանակը, մակերեսը կամ սենյակների թիվը	Գինը /ՀՀ դրամ/ ներառյալ ԱԱՀ
1	Ժամանակավոր կացարանների, ավտոտնակների, կրպակների, տաղավարների, թեթև կոնստրուկցիաներով կառույցների գնահատում	1 հատ	8 000 ՀՀ դրամ
2	Բնակարանների գնահատում	մեկ սենյակ	10 000 ՀՀ դրամ
		երկու սենյակ	12 000 ՀՀ դրամ
		երեք և ավելի սենյակներ	14 000 ՀՀ դրամ
3	Անհատական տների և առանձնատների գնահատում	մինչև 200քմ	22 000 ՀՀ դրամ
		201քմ և ավել	26 000 ՀՀ դրամ
4	Հասարկական և արտադրական շենքերի և շինությունների գնահատում	մինչև 1000քմ	27 000 ՀՀ դրամ
		1001-2000քմ	35 000 ՀՀ դրամ
		2001քմ և ավել	40000 ՀՀ դրամ
5	Հողատարածքների գնահատում	մինչև 1500քմ	10 000 ՀՀ դրամ
		1501-5000քմ	12 000 ՀՀ դրամ
		5001քմ և ավելի	14 000 ՀՀ դրամ
6	Արդյունաբերական շենքեր և շինություններ	մինչև 1500քմ	45 000 ՀՀ դրամ
		1501-3000քմ	50 000 ՀՀ դրամ
		3001-5000քմ	56000 ՀՀ դրամ
		5000քմ և ավելի	58000դր
7	Տրանսպորտային միջոցների, ինքնագնա մեքենաների, հաստոցների գնահատում	1-10 հատ յուրաքանչյուրի համար	7 000 ՀՀ դրամ
		11 և ավելի	6 000 ՀՀ դրամ
8	Հաստոցներ և սարքավորումներ	1 միավորի գնահատման արժեք	2 000 ՀՀ դրամ
9	Պահեստամասերի, իրենց լրակազմ կոմպլեկտների գնահատում	1 միավորի գնահատման արժեք	500 ՀՀ դրամ
10	Նյութերի գնահատում, արտահայտված կգ-ով, տոննայով կամ լիտրով	1 անվանման արժեքը	3 000 ՀՀ դրամ

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔ

N/N	Հետազոտվող օբյեկտների գնահատում	Հետազոտվող օբյեկտի քանակը, մակերեսը կամ սենյակի թիվը	Գինը /ՀՀ դրամ/ ներառյալ ԱԱՀ

	Տրանսպորտային միձոցներ, ինքնագնաց մեքենաներ, հաստոցներ գնահատում	1-10 հատ յուրաքանչյուրի համար	6 000 << դրամ
	Հանգույցներ և արքավորումներ	1 միավորի գնահատման արժեք	2 000 << դրամ
	Պահեստամասերի, իրենց լրակազմ կոմպլեկտների գնահատում	1 միավորի գնահատման արժեք	500 << դրամ
	Նյութերի գնահատում, արտահայտված կգ-ով, տոննայով կամ լիտրով	1 անվանման արժեքը	3 000 << դրամ
	Խոշոր եղջերավոր կենդանիներ	1-10 գլուխ	2 500 << դրամ
	Մանր եղջերավոր կենդանիներ	1-10 գլուխ	2 000 << դրամ
	Թռչուններ	1-10 հատ	300 << դդրամ
	Հագուստ, կոշկեղեն	1 կգ	100 << դրամ
	Տնտեսական ապրանքներ	1 հատ կամ 1 կգ	50 << դրամ 200 << դրամ
	Էլեկտրական սարքավորումներ	1 հատ	2000 << դրամ
	Կահույք	1 միավորի արժեքը	2000 << դրամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

0078, ք. Երևան, Հալաբյան 41ա

ՀՎՀՀ 01223338

Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

Հ/Հ 900011288025

_____ **Ա. Ավագյան**

ԿԱՏԱՐՈՂ

«Էքսպերտ Պրոֆ Գրուպ փորձաքննությունների և գնահատման կենտրոն» ՍՊԸ

Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Աղբյուր Սերոբ 3Ա, 29 տարածք

Գործունեության հասցե՝ ք. Երևան. Ամիրյան 22/24 տարածք

ՀՎՀՀ 00198361

Հ/Հ 2140006190530100

«Բիբլոս Բանկ» ՓԲԸ

Տնօրեն

_____**Ա. Նազարյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 07.03.2022թ.

Հիմք ընդունելով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի № 417 որոշումը՝ ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 29-ի «Հարկադիր կատարման ընթացքում անշարժ գույքի գնահատումն իրականացնող լիցենզավորված անձանց ընտրության մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» № 321-Ա հրամանով հաստատված հանձնաժողովն ուսումնասիրելով 2022 թվականի հունվարի 25-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակված մրցույթին մասնակցելու համար ներկայացված հայտը

ՈՐՈՇԵՑ

Մրցույթի հաղթող ճանաչել «ԷՔՍՊԵՐՏ ՊՐՈՖ ԳՐՈՒՊ փորձաքննությունների և գնահատման կենտրոն» ՍՊ ընկերությունը:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ նաև Կազմակերպիչ) պարտավորվում է սույն արձանագրությունը ստորագրելուց հետո մեկ ամսվա ընթացքում հաղթողի հետ կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր:

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ	ՀԱՂԹՈՂ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	«ԷՔՍՊԵՐՏ ՊՐՈՖ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը
ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ	Տնօրեն՝
_____ Ա. Վարդանյան	_____ Ա. Նազարյան